

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2017թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2017թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի գրավումը: ՀՀ ֆինանսական ցուցանիշները 2017թ.-ի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողել Ընկերության գործունեության արդյունքների վրա:

2017թ-ի անցած 11 ամիսների ընթացքում ձևավորվել և մշտապես պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճերով: Այսպես, վիճակագրական փաստացի տեղեկատվության համաձայն հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ տնտեսական աճը կազմել է 5.0%, իսկ հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի համար այն գնահատվում է 6.4%՝ չորրորդ եռամսյակի ԴՎԲ ծրագրում գնահատված 4.6%-ի դիմաց: Ներքին պահանջարկի արագ վերականգնումը շարունակել են նպաստել իրականացված ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը, պահպանվող համեմատաբար ցածր գնաճային միջավայրը և դրամական փոխանցումների բարձր աճը: Ներքին բարձր պահանջարկն իր հերթին արտահայտվել է ներմուծման, առևտրի, տնտեսության վարկավորման աճերի և բնականոն գնաճի արձանագրված տեմպերում: Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև արտաքին հատվածի զարգացումները, որոնց համաձայն չորրորդ եռամսյակում հիմնական գործընկեր երկրների տնտեսական աճի տեմպերը գերազանցել են սպասումները՝ պայմանավորված ներքին պահանջարկի վերականգնման արագ տեմպերով: Միջազգային ապրանքահումքային շուկայում գնաճային զարգացումներն ընթացել են հիմնականում ԿԲ կանխատեսումներին համահունչ, միայն նավթի գնի մասով է արձանագրվել սպասվածից ավելի աճ՝ պայմանավորված արտադրության ծավալների կրճատմամբ: Քննարկման արդյունքում ԿԲ Խորհուրդը գնահատեց. քանի որ առաջիկա ամիսներին միջազգային ապրանքային շուկաներում գնաճային միտումները կպահպանվեն և նման իրավիճակում արտաքին հատվածից ակնկալվում են չափավոր գնաճային ազդեցություններ: Քննարկվեցին վերաֆինանսավորման տոկոսադրույքը անփոփոխ թողնելու կամ 0.25 տոկոսային կետով բարձրացնելու տարբերակները: Գնաճային սպասումների և գնաճային ռիսկերի շարունակվող ավելացման պարագայում, Խորհուրդը դեռևս նախապատվությունը տվեց դրամավարկային քաղաքականության գործիքի տոկոսադրույքն անփոփոխ թողնելուն՝ հաշվի առնելով ներքին պահանջարկի վերականգնման տևականությունն ապահովելու անհրաժեշտությունը: Այսպիսով, դեկտեմբերին շարունակեցին գործել դրամավարկային քաղաքականության հետևյալ տոկոսադրույքները՝

- դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույք՝ 4,5%

- լոմբարդային ռեպո տոկոսադրույթ՝ 7,5%
- վերաֆինանսավորման տոկոսադրույթ՝ 6%:

Միևնույն ժամանակ ԿԲ Խորհուրդն այսօր առավել հաստատական է, որ կանխատեսված զարգացումների ներքո և միջնաժամկետ հատվածում գնանի նպատակի իրագործման առումով առաջիկայում անհրաժեշտ կլինի աստիճանաբար բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույթը, որի արդյունքում 12-ամսյա գնանը կանխատեսվող հորիզոնում կգտնվի տատանումների թույլատրելի միջակայքում՝ հորիզոնի վերջում կայունանալով գնանի նպատակային 4% միջին մակարդակի շուրջ:

Արդյունքում՝ 01.01.17-31.12.17 ընկած ժամանակահատվածում առաջնային շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը եղել է՝

- Կարճաժամկետ պարտատոմսեր՝ 6.5449%,
- Միջնաժամկետ պարտատոմսեր՝ 8.8755%,
- Երկարաժամկետ պարտատոմսեր՝ 12.3691%:


Որպես դրական հետևանք կարելի է շեշտել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված բարձր տարեկան եկամտաբերությամբ Պետական պարտատոմսերը, որոնք դասակարգվել էին որպես վաճառքի համար մատչելի, ապահովել են վերագնահատման պահուստի ան 342.2 մլն դրամով, կազմելով 368.7 մլն դրամ:

Ընկերության նորմատիվային ընդհանուր կապիտալը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 880.4 մլն դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 884.8 մլն դրամ: Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը 2017 թվականին ապահովեց 214.2 մլն դրամ զուտ շահույթ:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերության ընդհանուր կապիտալը 2017 թվականի վերջում նախատեսվում էր ունենալ 605.2 մլն դրամ, արդյունքում ապահովել է 884.8 մլն դրամ, որը կազմում է գործարար ծրագրով նախատեսված ծավալի 146.2%-ը: Վերջինս պայմանավորված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեղաբաշխած միջին ժամկետային և երկարաժամկետ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույթների իջեցմամբ, ինչի արդյունքում համապատասխանաբար նաև նվազել են ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը:




Որպես դրական հետևանք կարելի է շեշտել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված բարձր տարեկան եկամտաբերությամբ պետական պարտատոմսերը, որոնք դասակարգվել էին որպես վանառքի համար մատչելի, ապահովել են վերագնահատման պահուստի անկազմելով 364.2 մլն դրամ: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2017թ.-ի ընթացքում կազմել է 7.8%: Իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը կազմել է 7.2%: Ընդհանուր ակտիվների փաստացի ծավալը նախորդ տարվա հետ համեմատած ավելացել է և 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 12.3 մլդ դրամ՝ գերազանցելով գործարար ծրագրով նախատեսված 7.3 մլդ դրամը և ապահովելով գործարար ծրագիրը 164%-ով: Հարկ է նշել, որ ընդհանուր ակտիվներում 3.8 մլրդ դրամը կազմում են հաճախորդների նկատմամբ պահանջները: Այսպիսով, նախատեսված ցուցանիշը գերակատարվել էր արդյունավետ աշխատանքի և դիլերային հմտությունների շնորհիվ: Ընդհանուր պարտավորությունների փաստացի ծավալը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 11.3 մլդ դրամ: Գլխավոր պահուստը մնացել է անփոփոխ՝ կազմելով 37.5 մլն դրամ /կանոնադրական կապիտալի 15%-ը/:

բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

2017թ.-ի ընթացքում Ընկերությունը ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններից իրականացրել է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերով:


Ընկերության պորտֆելը բաղկացած է հետևյալ արժեթղթերից.

Ընկերության Պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը՝ ըստ անվանական արժեքի 31.12.17 դրությամբ (մլն դրամ)




Բացի ռեպո համաձայնագրերի շրջանակներում որպես ապահովման միջոց օգտագործված արժեթղթերից Ընկերությունն իր հաշվին ունի նաև ազատ արժեթղթեր, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության հաճախորդներին:

31.12.17թ-ի դրությամբ ազատ արժեթղթեր



Ինչպես կարող ենք նկատել, Ընկերությունն ունի ինչպես երկարաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ պետական պարտատոմսեր՝ համապատասխանաբար 49,8% և 50,2%:




Ընկերությունն ամբողջ 12 ամիսների ընթացքում ակտիվ գործառնություններ է իրականացրել թե առաջնային, թե երկրորդային շուկաներում և ներառվել է ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷԲՍ Արմենիա -ի կողմից հրապարակվող Գործակալների և պոտենցյալ մասնակիցների ցուցակում: Գործունեության վարքագծի գնահատումն իրականացվել է գործակալների 2016թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2017թ. հոկտեմբերի 1-ը միայն առաջնային շուկայում մասնակցության և երկրորդային շուկայում ակտիվության ցուցանիշների արդյունքներով: Եռամսյակային գնահատականը հաշվարկվում է առաջնային շուկայում մասնակցության միավորի

Պոտենցիալ մասնակից	2016-IV	2017-I	2017-II	2017-III	Տարեկան գնահատական
Էվոկաբանկե ՓԲԸ (նախկին Պրոմեթեյ բանկե ՓԲԸ)	7	7	6	7	27
ԱԼՖԱՍԵՔՅՈՒԲԻԹԻՉ ՍՊԸ	5	6	0	5	16
Հայէկոնոմբանկե ԲԲԸ	1	3	5	6	15
Ինելոբանկե ՓԲԸ	0	4	7	0	11
ՖՅՈՒԶՐ ԿԱՊԻՏԱԼ ՍԱՐԿԵՏ ՍՊԸ	0	5	2	3	10
Բիբլոս Բանկ Արմենիաե ՓԲԸ	4	1	4	0	9
Մելլաթ բանկե ՓԲԸ	2	2	1	2	7

40%-ին ավելացնելով երկրորդային շուկայում ակտիվության միավորի 60%-ը:

Հարկ է նաև նշել, որ ակտիվ գործունեության արդյունքում Ընկերությունը վաճառել է վաճառքի համար մատչելի պարտատոմսերը, ինչի արդյունքում Ընկերության պորտֆելի 90.7%-ը դասակարգվել է որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, իսկ 9.3%-ը՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ռիսկերի կառավարման արդյունավետությունն ապահովելու նպատակով Ընկերությունը նախատեսում է վերադասակարգում կատարել 2018թ.-ին: Եթե մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը վերաձևակերպվեն որպես վաճառքի համար մատչելի, ապա դրանց շուկայական արժեքը 31.12.17-ի դրությամբ կկազմեր 5,587 մլրդ դրամ, ինչը 542 մլն դրամով գերազանցում է դրանց հաշվեկշռային արժեքը:



Միջոցները հիմնականում ներգրավվել են ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով: Ընկերությունը շարունակել է ակտիվ համագործակցել իր գործընկերների հետ և 2017թ.-ի ընթացքում մեծ ծավալներ է ներգրավել 2016թ. նոր գործընկեր դարձած «Հայբիզնեսբանկ» և «Անելիք Բանկ» ՓԲ ընկերություններից: Կանգ չառնելով Ընկերության գործող արդյունավետության մակարդակում Ընկերությունը 2017թ.-ին շարունակում է ել ավելի օպտիմիզացնել և ընդլայնել իր գործունեությունը: 2017թ.-ին Ընկերությունը վերսկսել է համագործակցությունն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ» ՓԲԸ-ի հետ և մարտ, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին ֆինանսական շուկայում գործառնությունների իրականացման գլխավոր

համաձայնագրեր է կնքել «Անելիք Բանկ», «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ» և «Արցախբանկ» ՓԲ ընկերությունների հետ:

Ինչպես նշեցինք, Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2017-ի դրությամբ կազմել է 5.8 մլրդ դրամ՝ անվանական արժեքով, որը 2017թ.-ի ընթացքում ապահովել է 666.4 մլն դրամ տոկոսային եկամուտ: Բացի պետական պարտատոմսերից՝ Ընկերության պորտֆելում առկա են նաև 'Գլոբալ Կրեդիտ' և 'ՖԻՆԶԱ' ՈւՎԿ ՓԲԸ-ների պարտատոմսեր, որոնք ապահովել են 2.4 մլն դրամ տոկոսային եկամուտ: Այսպիսով, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 927.2 մլն դրամ:

գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ապահովել 3.0-3.5% եկամտաբերության մարժա ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների միջև:

Ընկերության տոկոսային եկամուտները նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 4%-ով և կազմել 927.2 մլն դրամ: Տոկոսային եկամուտները հիմնականում ձևավորվում են պետական պարտատոմսերում ներդրումներից:


Ընկերության տոկոսային ծախսերը նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 5%-ով և կազմել 520.3 մլն դրամ:

ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների համաձայն 2017թ. դեկտեմբերի ընթացքում 182,216 մլրդ դրամի 922 այլ ռեպո գործարքներ են կնքվել ՀՀ արժեթղթերի երկրորդային շուկայում միջինը 6,6149% տարեկան եկամտաբերությամբ:

Ընկերությունը դեկտեմբերի ընթացքում պետական պարտատոմսերով իրականացրել է 14,072 մլրդ ՀՀ դրամի 140 ռեպո գործարքներ միջինը՝ 6,7008% տարեկան եկամտաբերությամբ: Ներկայացնենք նաև հուլիս-դեկտեմբեր ամիսներին կնքված ռեպո գործառնությունների ընկերության միջին և շուկայական միջին կշռված տոկոսադրույքների համեմատությունը: Ինչպես նաև Ընկերությունն իրականացրել է 30 հակադարձ ռեպո գործարքներ իր ռեզիդենտ հաճախորդների հետ և դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է 21 գործող հակադարձ ռեպո պայմանագիր միջինը 7,0113% տարեկան եկամտաբերությամբ:

ՌԵՊՈՏՈՎԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԿՇՈՎԱԾ ԽՈՒՆԱՊՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 31.12.17

- Շուկայական միջին կշռված տոկոսադրույքը 6.5710%
- Ընկերության ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը 6.5710%
- Հակադարձ ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը 7.0269%



Ռեպո տոկոսադրույքի իջեցումը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության տոկոսային ծախսերի կառուցվածքում: Ցածր տոկոսադրույքներով ռեսուրսների ներգրավումը հնարավորություն է տվել ուղղակիորեն կրճատել մեր տոկոսային ծախսերը՝ աշխատակիցների կողմից արդյունավետ և ճիշտ դիլերային հմտություններ կիրառելու շնորհիվ:


Բացի պետական պարտատոմսերից՝ Ընկերության պորտֆելում առկա են նաև ‘Գլոբալ Կրեդիտ’ և ‘ՖԻՆ-ԶԱ’ ՈւՎԿ ՓԲԸ-ների պարտատոմսեր, որոնք ապահովել են 2.4 մլն դրամ տոկոսային եկամուտ:

Այսպիսով, 31.12.17 դրությամբ ընդհանուր տոկոսային ծախսը եղել է 520.3 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով գործարար ծրագրով նախատեսված 790 մլն-ից:

դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2017 թվականին Ընկերության կողմից ներգրավվել են 12 նոր ֆիզիկական անձ հաճախորդներ, որոնց հետ կնքվել են ՀՀ Պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ: 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործող հակադարձ ռեպո պայմանագրերի քանակը կազմել է 30 հատ (3,812 մլրդ դրամ արժեքով, անվ. արժեքը՝ 3,746 մլրդ դրամ):

Ներդրումային ընկերությունների՝ հաճախորդների նկատմամբ պահանջները



Մյուս ներդրումային ընկերությունների հետ համեմատության մեջ հստակ երևում է, որ Ընկերությունը հաճախորդների սպասարկման ոլորտում առաջատարներից է և գրավել է շուկայի 32.3%:

և) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա:

2017 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

2017 թվականի ընթացքում Ընկերությունն իր գործունեության արդյունավետությունն ավելացնելու և ընդլայնելու նպատակով արժեթղթերի բաժնի կադրային ներուժը համարել է առաջատար մասնագետով և պահառուով:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում:

Նշենք, որ Ընկերության բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2017 թվականի ընթացքում մասնակցել են տարբեր մասնագիտական որակավորման դասընթացների, բարեհաջող հանձնել են

քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

գ) նորամուծություններ.

Ընկերությունը 2017թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական, Ուկրաինական, Հունական արժեթղթերի շուկաները, որը հնարավորություն է տվել ներդրում կատարել Ռուսական արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը:

Ընկերությունը 2017թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ ԿԲ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը 2017թ-ին ևս 3 բանկերի հետ կնքել է գլխավոր համաձայնագրեր և այդ գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

Ընկերությունը 2015թ.-ից տեղափոխվելով նոր գրասենյակ դարձել է ավելի հասանելի հաճախորդների համար: Ընկերությունն ամբողջությամբ նորոգել և կահավորել է գրասենյակը, ապահովելով օրենքով սահմանված անվտանգության բոլոր համակարգերը, համարել է լիովին նոր համակարգչային և այլ անհրաժեշտ կենցաղային տեխնիկայով, ապահովել է ցանցային սպասարկման նոր որակ, ստեղծել է ժամանակակից և հարմարավետ գրասենյակ:

ե) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2017 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության ապահովմանը, ինչը նպաստել է հաճախորդների կայուն սեզմենտի ներգրավմանը:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնվեց տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ տվեցին ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան